

իսկ թնդանօթներուն երկայնութեմը իրկայնութեմը իրենց լայնութեանը համեմատ են, և որ զարմանալին է՝ նաւուն ընդհանուր շնչ քը, նաւական ճարտարապետութեան կանոնէն՝ և ոչ գծիւ չափ կը վրիպի : Նաւակ մը և երեք պղտի մակոյկ միացած են նաւուն հետ որոց առաջնոր այլ և այլ կտորներէ շինուած է, իսկ մէկաննոր՝ միակտուր փայտէ . որոց ամենքն ալ ունին իրենց նստարանները թի քաջողներուն համար :

### Նոր Մամնուք մը .

Պարոն Պէհր՝ Բեղրոպերկի կայսերական ճեմարանին գիտութեանց մասին պատույ կաճառորդը, վերջի փետրուար ամսուն մէջ թուղթ մը հաղորդեր էր նոյն ճեմարանին, զոր ընդունած էր 'ի Դոմաք նահանդէն (արմատեան Սիպերիա) . այս թղթին մէջ կը ծանուցանէր նոր մամնութի մը գտուած ըլլալը Դացովլքայա անուն ճախճախուտին մէջ :

Տեղացի մը իրեն կորսուած վիթեր՝ բնտուելու ելած ըլլալով, յանկարծ ճախճախուտ դաշտին մէջ մեծ եղինու մը կը տեսնէ գետնէն 'ի վեր բուած . խել ուղելով զայն արմատպէի, կ'իմանայ որ վիթխարի կենդանույ մը գրլիսուն մէկ մասն է . կը կոտրէ վերջապէս իրեն եղինու կարծած մասը, որ իրապէս կենդանույ վրիժակն էր, հետն ալ կտոր մը զիսոյն մորթէն կը փրցունէ :

Մորթը մէկ ու կէս մատ թանձրութիւն ունէր և երկու բուտ և կէս շիկացյն մազով ծածկած : Մարդը այս իրեն, տեսածը իմացուց նաեւ ուրիշներուն մինչև բանը Պր . կուլիայելին ականջը հասաւ : Պր . կուլիայել թղթին մէջ իր ակնկալութիւնը կը յայտնէ, որ ճեմարանը անփոյթ չըլլար անշուշտ իւր

թանդարանը այսպիսի մամմութով մը ճոխացնելու :

Տարակոյս չկայ այս գիտոյն մեծապէս շահաւէտ ըլլալը և ամենակարեոր գիտութեան . վասն զի երկար ժամանակէ 'ի վեր կարեսրութիւն կար մամութի կակուղ մասերուն վրայ ալ քըննութիւն ընելու և մինչեւ հիմա գրտնուած չէր: Ուստի ճեմարանը մասնաւոր գիտնոց յանձնեց, որ են ՊՊ. Պէհր, Պրանտի, Հէլմէսսէն և Շէնք, որ կարեւոր միջոցները 'ի գործ զնին և այդ մամմութին ոսկրոտիքը գետնէն հանելով թեղրոպուրկ հասցունել տան կայսերական թանգարանին մէջ զնելու :

### ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Ա. Ռ Զ Ե Խ Ը Ա. Ռ Ն Ե Լ Ո Ւ Կ Ե Ր Պ

### ԳԼՈՒԽ ԺԹ

Ծծմբային, աղային տաք յեր, լեյի և հոտակտ յեր, բուսական և համբային բլրուուտներ :

Ուշների, Ալքուայի, սուրբ Դանիէլի, Ապանյի, ու ասոնց պէս հանքային յրերը խիստ օգտակար են մորթային հիւանդութիւններու, խմելով կամ լուացուելով: Ասոնցմով լուացուելով մորթային եռը, որքիւնը, գոնջութիւնը, բորոտութիւնը կ'ըսունտնան, արեան առասութեան ու բորբոքմանց գէմ ալ կը զօրեն ասոնք . ստամզսի ալ, քանի մը թոքային հիւանդութեանց ալ օգուտ կընեն : Բայց Եւգանեան բլրուներուն վրայ բուն իրենց տեղը խմելով աս ջուրերը աւելի օգտակար են, ան տեղի առողջ, բարեխսառն ու քաջցր օդին ու ծծմբային գոլորշեացը համար :

Փափուկ խառնուած ունեցող անձանց, որ չեն կրնար մարսել աս յրերը, պէտք է կերակրի ատեն քիչ մը գինի հետո խառնելով տալ . ան ատենը նեղութիւն չեն տար, և մեծ օգուտ կ'ընեն հիւանդին: Ամիթի, անանուխի, կիտրոնի, նարընջի:

1 Տաձէկ . Էտոսն Քէմսուի :

2 Ալքուայի, կ'ըսունեն փղի, վարացի և նման կենանեաց ակռաները, որ բերնենէն դուրս ցցուած են սոսկ իրենց կենաց պահպանութեանը համար :